

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԴԻԱՆԱ ԱՐԹՈՒՐԻ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

**Ժ. 02.06 «Ասիայի հին ու նոր լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկավար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Լ.Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ռ. Կ. ՍԱՔՄՊԵՏՈՅԱՆ**

բանասիրական գիտությունների թեկնածու
Հ. Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բյուտովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան:

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. փետրվարի 1-ին, ժամը 15:00-ին
ՀՀ ԳԱԱ < Աճայշանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ <. Աճայշանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. դեկտեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ բանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Ն. Սիմոնյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխարհանքում ուսումնասիրվող խնդիրների արդիականությունը

Թուրքերենի բառապաշարի, թերականական կառուցվածքի զանագան դրսևորումների քննությունն այսօր էլ շարունակում է մնալ թուրքագետ - լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Լեզվաբանության արդի փուլում վերլուծական բարդությունները՝ կրկնավորներն ու հարադրությունները, պատմական և նկարագրական լեզվաբանությամբ զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնում են: Կրկնավորներն ու հարադրություններն իրերի և երևոյնների անվանումների համար կիրառվող ամենահին միջոցներն են և շարունակում են մնալ ժամանակակից թուրքերենում որպես բառակազմական կենսունակ կաղապարներ: Լեզվի զարգացման բոլոր փուլերում բառապաշարի համարման հիմնական աղբյուրը բառակազմական օրենքներով նոր բառերի ստեղծումն է: Թուրքերենի բառակազմության միջոցների մասին առավել խորը պատկերացում կարելի է կազմել կրկնավորների և հարադրությունների ծագումնաբանական, ծևաբանական, բառահմաստաբանական վերլուծությամբ, որը հնարավորություն կընձեռի լեզվական այս երևոյթի շատ իրողություններ ըմբռնելու և արժևորելու համար:

Ադենախոսության նպատակը

Ձեռնարկելով ժամանակակից թուրքերենի բառակազմության միջոցների՝ հարադրությունների և կրկնավորների քննությունը՝ փորձել ենք լուծել մեր առջև դրված հետևյալ խնդիրները:

- 1) Թուրքերենի բառակազմության մեջ առանձնացնել հարադրությունների և կրկնավորների արժեքն ու տեղը:
- 2) Ներկայացնել ժամանակակից թուրքերենի հարադրությունների և կրկնավորների հնչյունական, բառակազմական, ծևահմաստային, կիրառական, ոճական օրինաչափություններն ու յուրահատկությունները:
- 3) Վեր հանել ժամանակակից թուրքերենի հարադրությունների կառուցվածքային առանձնահատկությունները:
- 4) Դիտարկել հարադրությունների և կրկնությունների միջոցով բառիմաստի փոխակերպման իրողությունը: Առանձնացնել հարադրությունների և կրկնավորների հին թյուրքական շերտն ու կաղապարները, փոխառությունները և փոխառյալ կաղապարները:
- 5) Վեր հանել թուրքերեն հարադրությունների ու կրկնավորների հայերեն համարժեքները, որը հենք կծանալի հայախոսների՝ թուրքերենի ուսուցման գործընթացում լեզվական այս իրողությունները ճշգրիտ թարգմանելու և ըմբռնելու համար:

Գիրական նորույթը

Սույն ատենախոսության մեջ առաջին անգամ քննության են ենթարկվում ժամանակակից թուրքերենի հարադրությունների և կրկնավորների հնչյունական, բառակազմական, ձևաբանական, իմաստաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: Ժուղք, հայ, ինչպես նաև օտար լեզվաբանների ուսումնասիրությունների, մեթոդների և սահմանումների հիման վրա ձևաբանական, իմաստաբանական և շարահյուսական տեսանկյունից քննության է Ենթարկվել թուրքերենի բառակազմական այս իրողությունը, հարադրություններն ու կրկնավորները դասակարգվել են ըստ խոսքի մասերի, առանձնացվել են դրանց ձևաբանական դրսնորումները: Հարադրությունները և կրկնավորները դիտարկվել են նաև խոսքի շղթայում և վեր են հանվել դրանց այս կամ այն դրսնորումները շարահյուսական մակարդակում:

Աշխարհանքի մեթոդաբանությունը

Ուսումնասիրության մեթոդական հիմքում դրված է համեմատական լեզվաբանության վերլուծական եղանակը: Աշխատանքում կիրավել են լեզվական երևույթների քննության համաժամանակյա և դարաժամանակյա եղանակները, որոնք հնարավորություն են ընձենել՝
ա) համաժամանակյա մոտեցումով քննել ժամանակակից թուրքերենի հարադրությունների և կրկնավորների հնչյունական, բառակազմական, ձևաբանական, իմաստաբանական և շարահյուսական օրինաչափություններն ու առանձնահատկությունները.
բ) տարաժամանակյա եղանակի գործադրումով պարզել ժամանակակից թուրքերենի հարադրությունների և կրկնավորների պատմական զարգացման միտումները և կրած փոփոխությունները:

Աշխարհանքի ժամանակագրական սահմանները

Ներկա աշխատանքն ընդգրկում է թուրքերենի զարգացման բոլոր փուլերը, հատկապես ատենախոսության այն հատվածներում, որտեղ կատարվել են մանրամասն պատմահամեմատական վերլուծություններ ցեղակից թյուրքական այլ լեզուների հետ: Ժամանակագրորեն ատենախոսության մեջ տեղ են գտել ինչպես ժամանակակից թուրքերենի, այնպես էլ հին թյուրքական, միջին և նոր դարաշրջանների լեզվական փաստերն ու իրողությունները:

Աշխարհանքի կիրառական նշանակությունը

Ժամանակակից թուրքերնի հարադրությունների և կրկնավորների հնչյունական, բառակազմական, ծևախմատաբանական, կառուցվածքային և շարահյուսական դրսորումները կարող են հետաքրքիր նյութ մատուցել՝ ա) ընդհանուր լեզվաբանությանը, բ) բառակազմությանը՝ բառաբարդմանը, հարադրությունների և կրկնավորների կազմությանը, գ) թուրքերնի բառակազմությանը նվիրված ուսումնասիրություններին և հատուկ դասընթացներին, դ) հայախոսների համար նախատեսված թուրքերնի դասագրքերի և ձեռնարկների ստեղծմանը, ե) թուրքերնից հայերեն և հայերենից թուրքերն թարգմանություններում լեզվական այս իրողությունների հմաստագրութառական համարժեք կաղապարների վերհանմանը: Թուրքերնի հարադրություններում և կրկնավորներում առկա փոխառյալ շերտերի գործնական կիրառության գնահատականը հնարավորություն կրնձերի հետագայում ընդգրկուն ներկայացնել և հասկանալ թյուրքական լեզուների զարգացման միտումներն ու օրինաչափությունները:

Աշխարհանքի փորձաքննությունը

Աշխատանքի մի շարք դրույթներ և եզրակացություններ լուսաբանվել են «Կանքենց» և «Ալբելագիտության հարցեր» գիտական հոդվածների պարբերական ժողովածուներում, ինչպես նաև 2015թ. հոկտեմբերի 19-21-ը Թեհրանում կայացած “International Conference on Linguistic Heritage” միջազգային գիտաժողովի շրջանակներում: Ասենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնում: Առանձին հիմնախնդիրներ քննարկվել են արտերկյա մասնագետների և համապատասխան ոլորտների գիտնականների հետ:

Աշխարհանքի կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից՝ համապատասխան ենթագլուխներով և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ նկարագրվում են ատենախոսության հիմնական հարցադրումները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, հիմնավորված է թեմայի արդիականությունը, կարևորությունը, նորույթը և նպատակը: Տրվում է գրականության համառոտ տեսություն:

Առաջին գլխում՝ «Ժամանակակից թուրքերնի կրկնավորների և հարադրությունների ընդհանուր բնութագիրը», նկարագրվում է թուրքերներում կենսունակ վերլուծական բարդությունների՝ հարադրությունների և կրկնավորների՝ որպես թուրքերնի բառապաշտի համալրման կարևոր

Միջոցի կիրառական և գործնական նշանակությունը: Ժամանակակից թուրքերնում կրկնավորների և հարադրությունների միջոցով նոր բառային միավորների ստեղծումը շարունակում է մնալ բառակազմության ամենարդյուավետ միջոցներից մեկը, որը կարելի է ուսումնասիրել թե՛ բառակազմության, թե՛ ձևաբանության տեսանկյունից: Արևելյան յուրաքանչյուր լեզվում հարադրություններն ունեցել են զարգացման իրենց յուրահատկությունները: Լեզվաբանները, այս իրողությունը քննելով որպես ձևաբանական գործառույթ, հանգել են այն եզրակացության, որ ծագումնաբանորեն տարբեր լեզուներում կարելի է հանդիպել բառակազմական միևնույն կաղապարների:

Թուրքերնում կրկնավորները հիմնականում արտահայտում են իմաստի սասպիկացում, հոգնակիության գաղափար, գրևականություն, ընդհանրություն և գործողության միասնաբար կապարման իմաստներ: Այսպէս օրինակ՝ *iyi kötü /լավ - վաստակած, düse kalka / ընկնելով - վեր կենալով*, թուրքերնում կրկնավոր համարվող այս կառույցները հայերնում դիտարկվում են որպես հարադրություն: Թուրքերնում գոյություն ունեն կրկնավորների բազմաթիվ կաղապարներ: Դրանք լայնորեն տարածված են թե՛ գեղարվեստական, թե՛ ժողովրդական լեզվում: Վաղ շրջանի բուն թյուրքական (*Göktürk Yazılıları*) և օրհնյան հուշարձաններում (*Orhon Yazılıları*) կրկնավորների և հարադրությունների թիվը հասնում է 15-ի, որը բավական մեծ թիվ է այդ ժամանակի համար: Մ. Քաշգարի «Ժյուրքական լեզուների բառարանում» ("Divanü Lügat-i Türk") հարադրությունների ընդհանուր թիվը հասնում է 162-ի: Դեռևս խորեզմյան շրջանի ստեղծագործություններում արձանագրված բարդությունների մի զգայի մաս օգտագործվում է նաև ժամանակակից թուրքերնում, օրինակ՝ *mal türlü / ունեցվածք, ev bark/ լուսն-լուսի, ընկրանիք, երեխա, և այլն: Ույղորական ժամանակաշրջանում սկսում է ուժեղանալ օտար լեզուների ազդեցությունը: Թուրքերն, ույղորերն բառերի հետ համատեղ կիրառելով օտար լեզուներից փոխառած բառեր, շրջանառության մեջ են դրել մեծարանակ հարադիր կաղապարներ, օրինակ՝ *as içgül (iyicek içecek) / ուլութիր-խմելիք, ulug kicig (büyük kükük) / մեծ - փոքր, edgül yabız (iyi kötü) / լավ - վաստակած և այլն: Կարախանյան շրջանում հիշատակվում են հետևյալ ծերը՝ *սկս bilig (akıl bilgi) / խելք իմաստություն, iş tas (es dost) / ընկեր - բարեկամ:** Այս կաղապարները որոշ հնչյունական փոփոխությամբ առկա են ժամանակակից թուրքերնում: Բուն թյուրքական կաղապարների կողքին ամրագրվել են նաև բազմաթիվ ներքին և արտաքին փոխառյալ ծեր ու նորաբանություններից կազմված կրկնավորներ ու հարադրություններ, որը փաստում է այն մասին, որ ներկա փոփում ևս բառակազմական այս միջոցը դեռ շարունակում է մնալ կենսունակ:*

Երկրորդ գլխում՝ «Հնչյունական փոփոխությունների դերը

Կրկնավորների և հարադրությունների կազմավորման գործընթացում» առանձնացրել ենք՝ լիարժեք (ողոհայ ուստոր), փոխակերպված (որանչօրմութանի ուստոր), սղված (յսեղենի ուստոր) կամ մասնակի կրկնավորներ (ծաւրցեղութանի բերության պատճեն): Մեկ այլ դասակարգման համաձայն առանձնացվում են հնչունային, ծնույթային, վանկային և բառային կրկնավորների տեսակներ: Լիարժեք կրկնությունը իրականանում է բառի և ծևաբանական մասնիկների պարզ կրկնությամբ: *Փոխակերպված կրկնությունները* (թուրքերենում դրանք խմբավորվում են *İlaveli tekrarlar եղի բակլ*), ծագելով լիարժեք կրկնություններից, տարբերվում են իրենց նախնական ծնից երկրորդ բաղադրիչից որպական հատկանիշով, որն առաջին բաղադրիչից ութմիկ բառ-արձագանքն է: Առավելապես տարածված են *m-* հնչունով կազմվող փոխակերպված կրկնավորները, օրինակ՝ *para mara / փող- մող, փող և այլն*:

Փոխակերպված կրկնությունները ժամանակակից թուրքերենում կազմվում են գրեթե բոլոր խոսքի մասերից, այդ թվում՝ նմանողական բառերից: Հասուն գոյականներից կազմված կրկնավորներն ունեն արհամարհական, քամահրական երանք: Փոխակերպված կրկնավորները և այլն/*ve saire, նմանապիհաց benzer, առարկայի հետ կապված երևույթներ / ilgili şeyler* և այլ բաղադրիչների յուրօրինակ փոխարինումն են: Իմաստաբանական առումով ոչ կարևոր, երկրորդային բաղադրիչը, հետադաս դիրքում է: *Մասնակի կրկնության միջոցով կազմված բարդությունները, ըստ սղված հնչույթների քանակի, բաժանվում են երեք խմբի՝ երկինչույթ, եռահնչույթ և բառահնչույթ: Բարդությունների բաղադրիչները կարող են համահնչյուն լինել նաև հանգավորման կամ բաղաձայնույթի (այլիբերացիայի) միջոցով:*

1.Հարադրությունների և կրկնավորների բաղադրիչներն ըստ հնչունական դասավորվածության: Թուրքերենի հարադրություններին և կրկնավորներին հատուկ են հնչունական առանձնահատկություններ, որոնք շատ կարևոր են ունեն բաղադրիչների հերթականության՝ շարադասության գործում: Հարադրությունների կազմման գործում շատ կարևոր է հնչունային նմանությունը. ա) *հարադրությունների բաղադրիչների միջև ծայնավորների ներդաշնակության կանոն՝ din inam / սրբազն արժեքներ և հավատալիքներ, խիճ ու հավատ, don gömlek / կիսամերկ, kör topal / 1.քյոռ-թոփալ, 2. հազիկ - հազիկ, բ) առաջին հնչունների նմանություն, հավկապես բաղաձայնների դեպքում, օրինակ՝ bağ bağçel բաղ ու բախչա, bet beniz / դեմքի գույն, գ) հնչունային նմանություն՝ ըստ վերջին հնչունի՝ աչ biilaç / սոված-ծարավ, անխնամ, akça rakça /մաս-մաքուր, լուսավոր, allak bullak / խառնիխուռն, դականուպիրա եղած, դ) հետադաս են *p-, b-* հնչուններով սկզբող բաղադրիչները՝ եօլիկ քօրչէկ / մասնատված, առանձին-առանձին, անջատ - անջատ, eğri բüğrü / ծուռումուռ, ե) նախադաս են վանկերի քանակով պակաս բաղադ-*

րիչները *kul köle / hıltılınaqawıńı,* զ) նախադաս են ծայնավորով սկսվող բաղադրիչները *ara sıra / tırrıtmın,* az *bız / mih* փոքր, *mih* քիչ, *açık* սաշկ / *rawgıbırawgı,* Ե) նախադաս են թյուրքական բառ-բաղադրիչները՝ *kiş* կիամետ / *gınırıtu-*սանամանիք, *eksik fazla / aylıq-aylaqısu,* *güçlü kuvvetli / nişetli-* հզոր, բայց այստեղ ևս կարող են լինել բացառություններ, դրանցից են օրինակ՝ *akilli uslu* կամ *uslu akilli / hıltıqı,* *gönül hattır* կամ *hattır gönül / uhrıqı* ու *hıqı,* Է) մեկը մյուսին հաջորդող գործողություն մատնանշող բայերից կազմված կրկնավորներ՝ *alım satım / aqır ni qabdaqır, alışveriş / aqılsıqırı:* Թուրքերնում բավական մեծ թիվ են կազմում բնաձայնական կրկնավորները, օրինակ՝ *çarpık çırpık / öwämäjıntıng, tak tuk / rıhıly - rıhılk, çat çut / dıwıjıntı:*

Երրորդ գլխում՝ «Ժամանակակից թուրքերենի անվանական հարադրությունները և կրկնավորները» առանձնացրել ենք կապակցական, շաղկապական, հարակցական բարդությունները: Թուրքերենում անվանական հարադրությունները իմաստաբանական հարաբերակցությամբ լինում են՝ *առնչակից (eşsesli), hımlınlı, hılaqlınlı (zit anımlı):* Հոմանիշ, հականիշ կամ առնչակից բառերի հարադրությամբ կազմված բարդություններից բացի՝ թուրքերենում շատ տարածված են օտարաբանություններով կազմված ծևախմաստային միավորները: Անվանական հարադրի կապակցական հարադրությունները պայմանականորեն բաժանել ենք երկու խմբի: Առաջին խմբի կառուցների երկու բաղադրիչները ծնույթներ են, իսկ երկրորդ խմբի հարադրավորների բաղադրիչներից միայն մեկը կարող է ծնույթ ստանալ:

1. Կապակցական անվանական հարադրություններ և կրկնավորներ: Կապակցական հարադրության բաղադրիչներից մեկը կամ երկուսը շարակիուսորեն կապակցված են քերականական թեր ծևերով, օրինակ՝ *baştan aşağıya / վերսից ներքև, ağızdan ağıza / թերանից թերան:* Հայերենում և այս կարգի վերլուծական կրկնավորներն ունեն համադրական կազմությամբ գրաբարյան ծևեր, օրինակ՝ *ყնից գրուն, գնելուն, քարից քար, քարերար, սարից սար, սարեսար և այլն:* Անվանական կապակցական հարադրությունները ժամանակակից թուրքերենում ունեն կազմման բազմաթիվ կադապարներ:

2.Հարակցական անվանական հարադրություններ և կրկնավորներ: Անվանական հարադրությունների բաղադրիչներն իմաստաբանական հարաբերակցությամբ լինում են՝ *առնչակից, hımlınlı, hılaqlınlı:* Բարդությունների շարքում առանձնացրել ենք նաև մի խումբ, որի բաղադրիչներից մեկը կամ նույնիսկ երկուսը ինքնուրույն բառային միավորներ չեն և լեզվում ինքնուրույնաբար չեն կիրառվում: Որոշ դեպքերում առաջին հայացից նման բաղադրիչները ժամանակակից թուրքերենում գորկ են բարիմաստից, սակայն բարի պատմահամեմատական թնդնդությամբ հնարա-

վոր է դառնում վերականգնել տվյալ բառի անցյալում ունեցած իմաստը: Մեծ մասամբ նման կառուցների բաղադրիչները հոմանիշ բառեր են և ունեն բաղադրիչների հնյունական համանմանություն:

2.1.Հոմանիշ իմաստներով կազմված անվանական հարադրություններ: Ժամանակակից թուրքերնում և առհասարակ թյուրքական լեզուներում առավելապես շատ տարածված և գործածական են հոմանիշների հարադրությամբ կազմված բարդությունները: Օսմանյան շրջանում շատ տարածված էր պարսկական իզաֆետը, որը *ii -ի* միջոցով կազմում էր հարադրությունների կաղապարներ. օրինակ՝ *can ii gönüllü/սիրոր ու հոգի, կի այզ / ամառ ու ծմբու և այլն:* Այս կաղապարը նույնանում է հայերենի բաղյուսական հարադրություններին:

Մակրաների զուգադրությունները սովորաբար կիրառվում են ընդհանուր իմաստի սաստկացման, ուժգնացման նպատակով, օրինակ՝ Sekeit pek çok şeyler öğremiştı. / Շեմքեթը շար ու շար (չափազանց շար) բաներ սովորեց: Հոմանիշ բայերի՝ դերբայների կամ դիմավոր ձևերի զուգադրությամբ կազմված հարադրությունները սովորաբար արտահայտում են հատկանիշի որակի գերագույն աստիճան՝ գործողությանը հաղորդելով սաստկացում:

2.2.Հականիշ անվանական հարադրություններ: Ժամանակակից թուրքերնում հարադրությունների մեկ այլ խումբ կազմվում է երկու լիմանատ հականիշ բառերից: Հականիշ բաղադրիչներով կազմված հարադրությունները գործածվում են ոճարտահայտչական նպատակներով, դարձվածքներում, առածներում, ասացվածքներում, դարձվածքանական կապակցություններում, թերթային դիպուկ վերնագրերում: Թարգմանության ժամանակ երբեմն հարկ է լինում երկու բաղադրիչներն էլ թարգմանել՝ իմաստը լիարժեք արտահայտելու համար:

2.3. Մեկ կամ երկու ոչ լիարժեք բառային միավորներով կազմված հարադրություններ: Կենսունակ կաղապարներ են այնպիսի հարադրությունները, որոնց բաղադրիչներից մեկը կամ երկուսն իմաստաբանական առումով ոչ լիարժեք միավորներ են, բարիմաստից զորկ բառեր: Այս խումբը կարելի է բաժանել երկու ենթախմբերի. ա) հարադրություններ, որոնց առաջին կամ երկրորդ բաղադրիչը հիմնական բաղադրիչի հնյունափոխված տարրերակն է, բ) հարադրություններ, որտեղ երկու բաղադրիչներն էլ ինքնուրույն բառային միավորներ չեն, լեզվում առանձին կիրառություն չունեն և պահպանվել են միայն հարադրության մեջ: Միևնույն ձևով հնյունային համապատասխանությամբ կազմվում են հարադրություններ, որոնց երկրորդ բաղադրիչը թեև ունի ինքնուրույն կիրառություն, սակայն հարադրության կազմում հանդիս է գալիս որպես սպասարկու կամ պարզապես բառ-արձագանք: Օրինակ՝ *allak bullak* հարադրության առաջին բաղադրիչը իր առաջին իմաստով նշանակում

Էստախոս, անվստահելի մարդ, իսկ երկրորդ բաղադրիչը՝ աղբյուր, սակայն միասին ունեն խառնիխուռն, տակնուպրա, աղոտ-մաղոտ իմասպը: *Her tarafı alak bulak ettin. /Zərur կողմը գրակնուպրա արեցիր: Götülm alak bulak görüyor, seni bilemedim./* Աչքս աղուր է դեսնում, թեզ չկարողացա ճանաչել:

3. Կրկնավորները և հարադրությունները որպես հոգնակի թվի արդահայրման միջոց: Լեզվում հոգնակիովթան արտահայտման բազմաթիվ միջոցներից առավել կիրառական և ընկալելի է քերականական միջոցը: Հոգնակիության արտահայտման քերականական ծներից բացի՝ բառակազմության մեջ լայնորեն տարածված է նաև շարահյուսաձևաբանական, շարահյուսական կամ բառային տարատեսակը: Այսինքն՝ ծնաբանական գործնթացի դերն այս պարագայում ստանձնում է բառայինը: Առանձին բառին կամ բառաձևին գործառական առումով համապատասխանում են զանազան բառային գուգադրություններ: Նմանօրինակ բառային գուգադրություններ են նաև բարդությունները՝ հարադրությունները, կրկնավորները: Կրկնավորները չեն կարող հանդես գալ որոշչ քանակական թվականներով, քանի որ արտահայտում են քանակ, մոտավոր չափ: Վերացական գոյականների կամ չտրոհվող՝ հավաքական իմաստ արտահայտող գոյականների հետ կիրառության դեպքում ևս գոյականները չեն ստանում հոգնակիակերտ ածանց:

Եթե փորձենք գուգահեռներ տանել թյուրքական լեզվալնտանիքի այլ լեզվների հետ, ապա կտանանք հետևյալ պատկերը: Բաշկիրերենում բաշխական թվականները հիմնականում արտահայտում են վերացական թվերի գաղափարը՝ առարկաների առանձնացման պարագայում: Կազմվում են -ap, -er, -aap, -awer ածանցների կցմամբ և շատ հաճախ կիրառվում են կրկնված տարրերակով ծերը ծերը / մեկ - մեկ, յար յար / տասը - տասը, տասական և այլն: Նոյնը կարող ենք ասել նաև կոմիկերենի համար, որտեղ բաշխական թվականին կարող է ավելանալ նաև հավաքականության իմաստը. ածանցներ՝ -as, -es, կամ -an, -en:

4. Շաղկապների և կապերի ներդրման միջոցով կազմված անվանական հարադրություններ և կրկնավորներ: Ժամանակակից թուրքերենում նոյնական կրկնավորներին են հարում նաև այն ծները, որոնք կազմվում են զանազան ածանցների, մասնիկների, սպասարկու բառերի, հետադրությունների ներդրման միջոցով և միավորվում են *Aralıklı İkilemeler, Bağlaçlı İkileme, Sorulu İkileme* եղին ներքո: Ամենից առավել գործածական են՝ *da, ve, ama շաղկապները, be նախդիրը, oğul, üstüne, bir, gibi* կապական բառերը, *mi* հարցական մասնիկը: Դրանց ներդրմամբ կազմվում են մեծաթիվ թե՛ անվանական, թե՛ բայական կրկնավորներ: Օրինակ՝ *Günler ve günler geçti. / Անցան շաբ ու շաբ օրեր (օրեր ու օրեր անցան):*

4.1. Շաղկապական կրկնավորներ: Թուրքերենում գործածվում է շաղկապների մի խումբ, որը լայնորեն կիրառվում է բառակապակցական,

բառակազմական, դարձվածաբանության ոլորտում: Այդ շաղկապներից են՝ *ne...ne / հչ ոչ, hem..hem / և՛ և՛, hem de, gerek.. gerek gerekse / և՛ և՛, ister.....ister / կամ կամ, olsunolsun / թող թող, kah kah / և՛ և՛, ya ya / կամ կամ:*

Չորրորդ գլխում՝ «Ժամանակակից թուրքերենի բայական կրկնավորները և բայական հարադրական բարդությունները» փորձ է արվել ներկայացներու ժամանակակից թուրքերենի բայական հարադրական բաղադրությունները, դրանց կազմման առանձնահատկությունները, կաղապարները, հայերեն համարժեքները: Բայական հարադրությունները և կրկնավորները կազմվում են ինչպես բայի անորոշ, դիմավոր, այնպես էլ խոնարիված ձևերից: Բաղադրիչներից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ ինքնուրույն կամ կապակցված այս կամ այն շաղկապով, սպասարկու բառերով, զանազան ածանցներով, ներդիր մասնիկներով:

1.Ածանցների միջոցով կազմված բայական հարադրություններ և կրկնավորներ: Բայական բաղադրության մի տեսակ կազմվում է բայի անդեմ ձևին (*mak, mek*) -*li* բառակազմական ածանցի կցումով: Մեծ թիվ են կազմում նաև զանազան դերբաներով կազմված բայական կրկնավորների կաղապարները: Այսպես՝ -(y) *a* դերբայը, որը սովորաբար հանդես է զայիս որպես գործողության կատարման ձևի պարագա՞ կիրառվում է բացառապես կրկնության տեսքով: Թուրքերենում լայն կիրառություն ունեն -(y) *ip* ածանցով կազմված դերբայով կրկնավորները: Իմաստաբանական առումով այս կրկնավորները կարող են կազմվել մերձիմասս և նոյնարմատ բառերից: Բայական հարադրությունների մեջ ձևակազմական արժեք ունեն *vermek* /կրակ, *kalmak* / մնայ, *durmak* / կանգնել, *gelmek* / գալ, *gitmek* / գնայ, *yazmak* / գրել բայերը՝ որպես հարադրության երկրորդ, օժանդակ բաղադրիչ: Հարադրության առաջին բաղադրիչ բայի հետ ունի և՛ միասին և՛ առանձին գրության ձև:

2.Բայի խոնարիված ձևերով կազմված կրկնավորներ: Ժամանակակից թուրքերենում կրկնավորների մեծաթիվ կաղապարներ կարող են կազմվել բայի դիմավոր ձևերի պարզ կրկնության միջոցով: Կրկնավորների բաղադրիչները կարող են խոնարիված լինել թե՛ միևնույն ժամանակով, թե՛ տարբեր ժամանակածներով: Բայական կրկնավորները քերականական հատուկ ձևեն. դրանք օգտագործվում են զուտ լեզվանական առումով՝ խոսրին արտահայտչականություն, հուզականություն հաղորդելու նպատակով, ուստի այստեղ կարող է լինել բայի երկակի, եռակի և քառակի կրկնություն: Հնարավոր է, որ բաղադրիչներից մեկը հանդես գա նաև բառակազմական և ձևակազմական ածանցների սղված տարբերակով:

3.Շաղկապներով կապակցված բայական կրկնավորների կազմության ձևերը: Ժամանակակից թուրքերենի բայական հարադրի կրկնավորները կապակցվում են զանազան ներդիր ածանցներով,

շաղկապներով կամ սպասարկու բառերով: Ամենատարածված և գործածական ներդիր ածանցներն են՝ *-da*, *-mi*, *-ha*, *-ki*, *-ve*, *-be*: Սրանք խիստ բնորոշ են բայական և անվանական կրկնավորներին:

Հինգերորդ գլխում՝ «Հարադրությունները և կրկնավորները շարահյուսական կառույցներում» ներկայացրել ենք հարադրությունների և կրկնավորների շարահյուսական զանազան դրսերումները: Հարադրությունները նախադասության կազմում սովորաբար իրականացնում են ամենաբազմազան շարահյուսական պաշտոններ՝ կախված իրենց ծևաբանական առանձնահատկություններից և խոսքիմասային պատկանելությունից: Սա առավել ակնհայտ է այն հարադրությունների դեպքում, որոնք նախադասության մեջ հանդես են զայս որպես միասնական բառային ինքնուրույն միավոր և իրականացնում են այս կամ այն շարահյուսական գործառույթ: Սովորաբար անոն խոսքի մասերից կազմված հարադրությունները նախադասության մեջ կարող են հանդես գալ որպես ենթակա, խնդիր, լրացում և ստորգալ: Ծավալուն որոշիչով բառակապակցություններում (իզաֆերային տեսակ), հարադրությունը կարող է իրականացնել թե՛ որոշչի և թե՛ որոշյալի գործառույթ:

2. Կրկնավորները նախադասության կազմում: Ժամանակակից թուրքերնում կրկնությունը նաև խոսքիմասային տարբերակման միջոց է: Գոյականներով, ածականներով և այլ խոսքի մասերով կազմված կրկնավորներն ունեն շարահյուսական դրդապատճառներ՝ կապված պարագա և որոշիչ տարբերակման հետ: Պատմականորեն այն ընդհանրությունը, որ գոյություն ուներ գոյական-ածական-մակրայ խոսքի մասերի պարագայում, հետզհետեւ սկսվում է տարբերակվել՝ ըստ դրանցից յուրաքանչյուրի շարահյուսական գործառույթների: Կրկնությունը յուրօրինակ միջոց է նաև այս կամ այն բառային միավորի շարահյուսական գործառույթի հստակեցման համար: Նախադասության մեջ բարի այս կամ այն շարահյուսական պաշտոնի հստակ տարանջատման և սահմանման գործում կրկնությունից բացի կարող են կիրավել նաև զանազան ծևաբանական ածանցներ:

2.1. Կրկնավոր գոյականները նախադասության կազմում: Կրկնավոր գոյականները, ժամանակի կամ տեղի մակրայներ դառնալով, նախադասության մեջ կատարում են պարագայական գործառույթ՝ կիրառվելով բայի անդեմ և դիմավոր ծևերի հետ: Կրկնավորները կարող են իրականացնել նաև ստորոգելիի գործառույթ: Նման որոշիչները, արտահյուսում են պարագայական հատկանիշ՝ մատնանշելով ծև, տեսակ, վիճակ, մեթոդ և այլն: Սովորաբար այդ գործառույթը իրականացնում են որոշիչ մակրայները: *Sira sira demir kovalarda sular bosalar dolar.* (Yakup Kadri, Yaban, s.56). / Չարք - շարք երկաթյանորներում ջուրն անընդհակ լցվում-թափում էր:

2.2. Կրկնավոր ածականները նախադասության մեջ: Թուրքերնում ածականի շարահյուսական գործառույթները մեծապես պայմանավորված են այն հանգամանքով, թե ինչ խոսքի մասի են վերագրվում:

2.3. Բայական կրկնավորները նախադասության շղթայում: Սահմանական եղանակով բայական կրկնությունները իրականացնում են որոշի գործառույթ: Նմանօրինակ կրկնավորները մեծ մասամբ հանդիս են գալիս անվանական ստորոգյափ պաշտոնում, և այս դեպքերում առավել են ընդգծվում որակական հատկանիշները:

3. Կրկնավորների այլ գրեսակները նախադասության կազմում: Փոխակերպված կրկնավորների հիմնական առանձնահատկությունն այն է, որ բաղադրիչները ծնույթներ են ստանում միաժամանակ, թեև սա կայուն օրինաչափություն չէ, և կարող են նկատվել նաև շեղումներ: Փոխակերպված կրկնավորները նախադասության մեջ կարող են հանդիս գալ շարահյուսական բոլոր պաշտոններով: Սղված կրկնավորների շարահյուսական գործառույթների բնութագրման ժամանակ, պետք է նկատի ունենալ նաև բարդության ծնաբանական առանձնահատկությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտությունը հաստատում է, որ ժամանակակից թուրքերնի հարադրությունների և կրկնավորների ուսումնավորությունը բազմաբարդ խնդիր է հատկապես պատմական զարգացման տեսանկյունից: Հարցի բարդությունը պայմանավորված է ոչ միայն կրկնավորների և հարադիր բարդությունների տարաբնույթ էլույամբ, այլև նրանց յուրացման տարրեր կողմերի փոխակերպածությամբ, որոնց համակողմանի քննությունը կարող է տալ կրկնավորների և հարադիր բարդությունների յուրացման ամբողջական պատկեր՝ բացահայտելով նաև դրանց հայերեն ճշգրիտ համարժեքները:

Քննությունից պարզվում է՝

1. Թուրքերնի զարգացման յուրաքանչյուր փուլում հարադրությունները և կրկնավորներն ամենագործածական և կենսունակ լեզվական իրողություններն են: Ժամանակակից թուրքերնում ևս կրկնավորների և հարադրությունների միջոցով բառային նոր միավորների ստեղծումը շարունակում է մնալ բառակազմության ամենաարդյունավետ միջոցներից մեկը:

2. Բուն թուրքական կաղապարների կողքին լեզու են ներթափանցել նաև բազմաթիվ ներքին և արտաքին փոխայոյալ ձևեր, նորաբանություններից կազմված կրկնավորներ ու հարադրություններ: Ժամանակակից թուրքերնում կրկնավորներն ու հարադրությունները չափազանց բազմատեսակ են թե՛ իրենց ձևերով և թե՛ արտահայտման քերականական հմաստներով, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ինչպես տվյալ լեզվի քերականական, այնպես էլ լեզվանական երևույթները:

3. Ժամանակակից թուրքերնի բառակազմության առավել ակտիվ և արդյունավետ միջոցներից մեկը հնչյունային փոփոխությամբ՝ սղմամբ, փոխակերպմամբ, արմատակրկնությունն է: Կրկնավորի այս տեսակները առավել գործածական են ժողովրդախոսակցական և գրական լեզվում՝ հաղորդելով խոսքին առավել արտահայտչականություն, յուրահատուկ ոճ: Ըստ հնչյունական փոփոխությունների՝ կրկնավորները լինում են լիարժեք, մասնակի կամ սղված և փոխակերպված: Լիարժեք կրկնությունն ամբողջ բաղադրիչի կրկնությունն է, փոխակերպված կրկնությունը բառ – արձագանք է: Այն իր հերթին կարող է լինել հնչյունափոխված և անհնչյունափոխ, այսինքն՝ բաղադրիչներից մեկում տեղի է ունենում ձայնավորների հնչյունափոփոխություն: Մասնակի կամ սղված կրկնության դեպքում կրկնվող բաղադրիչներից մեկում առկա է հնչյունների մասնակի սղում: Մասնակի կրկնությունները, ըստ սղված հնչույթների քանակի, բաժանվում են երեք խմբի՝ երկինչույթ, եռահնչույթ, քառահնչույթ: Կրկնավոր կառուցի բաղադրիչները կարող են համահնչյուն լինել նաև հանգավորման կամ բաղաձայնությի (այլտերացիայի) միջոցով: Թյուրքական լեզուներին բնորոշ ձայնավորների ներդաշնակության կանոնն առկա է նաև կրկնավորներ և հարադրություններ կազմելիս:

4. Ժամանակակից թուրքերենի անվանական հարադրական բարդությունները կազմվում են գոյական, ածական, մակրայ, թվական, շաղկապ, եղանակավորող բառ խոսքի մասերի հարադրությամբ: Կազմովայամբ լինում են՝ *առնչակից* (*es sesli*), *հոմանիշ* (*es anlamlı*), *հականիշ* (*zit anlamlı*): Հարակցական հարադրական բարդությունները բառերի կապակցություն են մեկ բառային իմաստով, որոնց բաղադրիչները հանդիս են գալիս անշատարար՝ իրարից բաժանվելով արտասանական զգայի դադարով և ծևական անկախությամբ: Գրավոր խոսքում ունեն բաղադրիչ բառերի գրության կամ անջատ, կամ էլ միացման գծիկով ծևերը: Անվանական հարադրությունները համարվում են բարդության ամենահին տեսակը: Դրանք հիմնականում ինքնուրույն բառային միավորներ են, որոնք, պահպանելով իրենց իմաստները, երբեմն ձեռք են բերում բոլորովին այլ, նոր իմաստներ: Հարադրությունների մեծ մասն ունի վերացարկված իմաստ, քան դրանք կազմող բաղադրիչներից յուրաքանչյուրը առանձին-առանձին, այսինքն՝ հարադրությունները ստանում են փոխարերական կամ այլաբանական նշանակություն՝ հաճախ վերածվելով դարձվածային միավորների:

5. Ժամանակակից թուրքերենի առանձնահատկություններով պայմանավորված՝ գոյություն ունեն կրկնավորների՝ բայական և հարադրի բաղադրությունների բազմաթիվ կաղապարներ: Բայական կրկնավորները և հարադրի բաղադրությունները բերականական հասունություն ունեն: Խոնարհված բայական կրկնավորներ կարելի է կազմել բոլոր ժամանակածերով: Կրկնավորները կազմվում են նաև բայի անդեմ ծևերով: Բայական հարադրի կրկնավորների կաղապարներն առհասարակ լեզվում մեծ թիվ են կազմում և լայնորեն գործածական են թե՝ ժողովրդախոսակցական, թե՝ գեղարվեստական խոսքում: Դրանք խոսքին հաղորդում են զգացմունքայնություն, արտահայտչականություն, հոգականություն, գործողության կատարման ինտենսիվություն, իմաստի ուժգնացում, սաստկացում, իմաստի մեղմացում, բազմակիություն:

6. Նախադասության կազմում հարադրությունները սովորաբար իրականացնում են ամենաբազմազան շարահյուսական պաշտոններ՝ կախված իրենց ծևաբանական առանձնահատկություններից և խոսքիմասային պատկանելությունից: Դրանք նախադասության մեջ հանդիս են գալիս որպես միասնական բառային ինքնուրույն միավոր և իրականացնում են այս կամ այն շարահյուսական գործառույթը: Նախադասության շղթայում տրոհված բաղադրիչներով հարադրությունները հայերեն թարգմանելիս շատ հաճախ պահպանում են իրենց իմաստները, այսինքն՝ տրվում է հարադրության, այլ ոչ թե այն կազմող բաղադրիչների առանձին իմաստները: Հաճախ հնարավոր է վերականգնել նաև բաղադրիչներից յուրաքանչյուրի իմաստը, նույնիսկ երբ հարադրությունը կազմված է ոչ իմաստակիր բաղադրիչներից: Այդ

դեպքում բաղադրիչները հանդես են գալիս ոչ թե իրենց ուղղակի իմաստներով, այլ որպես դարձվածային միավորներ: Հարակցական և կապակցական հարադրությունների բաղադրիչները, ի տարբերություն շաղկապական հարադրությունների, ոնեն առավել վերացարկված, միաձոյլ բնույթ, իսկ շաղկապական հարադրությունների բաղադրիչները իմաստաբանական տեսակետից ավելի ինքնուրով են:

ա) Անոն խոսքի մասերից կազմված հարադրությունները նախադասության մեջ կարող են հանդես գալ որպես ենթակա, խնդիր, լրացում և ստորոգյալ, բ) ծավալուն որոշչով բառակապակցություններում (իզաֆեթային տեսակ), հարադրությունը կարող իրականացնել թե՛ որոշչի և թե՛ որոշյալի գործառույթ:

7. Կրկնությունը յուրօրինակ միջոց է նաև այս կամ այն բառային միավորի շարահյուսական գործառույթի հատակեցման համար: Գոյականներով կազմված կրկնավորները կարող են դառնալ ժամանակի և տեղի մակրայներ և նախադասության մեջ կատարել պարագայական գործառույթ՝ կիրառվելով բայի անդեմ և դիմավոր ծևերի հետ: Առավել լայն կիրառություն ունեն այն կրկնավոր գոյականները, որոնք, ծեռք բերելով ծևի մակրայի իմաստ, նախադասության շղթայում հանդես են գալիս որոշչի պաշտոնով:

8. Կրկնավորները կարող են իրականացնել նաև ստորոգելիի գործառույթ: Որոշ կրկնավոր գոյականներ կարող են հանդես գալ որպես որոշչներ՝ մատնանշելով ծև, տեսակ, վիճակ այլն: Կրկնավոր ածականները նախադասության մեջ չունեն կայուն շարահյուսական դիրք: Ժամանակակից թուրքերենում կան բազմաթիվ ածականներ, որոնք պարագայական գործառույթ իրականացնելիս հանդես են գալիս բացառապես կրկնավոր ծևով, եթե նույնիսկ դրված են անմիջապես բային մոտ:

9. Փոխակերպված կրկնավորները նախադասության մեջ կարող են հանդես գալ շարահյուսական թոլոր պաշտոններով՝ կախված հիմնական բառի ծևաբանական յուրահատկություններից: Սղված հնչյուններով կրկնավորները դառնում են մակրայներ և հիմնականում իրականացնում են պարագայական գործառույթ:

10. Արված ուսումնասիրությունից կարելի է փաստել, որ հայերենում և թուրքերենում կան բառարդման մի շարք լընդիհանրություններ: Թուրքերենից հայերեն թարգմանելիս պետք է հաշվի առնել հայոց լեզվի լեզվանձական առանձնահատկությունները: Կան թուրքերեն կաղապարաններ, որոնք հայերենում ունեն դարձվածային համարժեքներ: Երբեմն էլ, երբ կաղապարի բաղադրիչները ոչ իմաստակիր բառային միավորներ են, անհրաժեշտություն է առաջանում կատարել բառացի թարգմանություն:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ թուրքերենի կրկնավորներն ու հարադրությունները կարևոր դեր են խաղացել լեզվի զարգացման թոլոր

փոլերում և կարևոր միջոց հանդիսացել բառապաշտի հարստացման համար: Այսօր էլ կրկնավորներն ու հարադրությունները թուրքերնի բառակազմության և ձևաբանության գործուն միավորներն են:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Հայրապետյան Դ., Ժամանակակից թուրքերնի բայական կրկնությունները, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, հատոր 7, էջ 395-408:
2. Հայրապետյան Դ., Ժամանակակից թուրքերնի արմատական կրկնությունների տեսակները, Կանրետ, 1 (54) (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, էջ 80-88:
3. Հայրապետյան Դ., Թուրքերնի ոչ լիարժեք բառային միավորներով կազմված հարադրություններ, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2013, հատոր 8, էջ 267-272:
4. Hayrapetyan D., Iranian Vocabulary in Modern Turkish Juxtapositions and Duplicate Forms, Abstracts of International Conference on Linguistic Heritage, Tehran, 2015, p. 60.

Айрапетян Диана Артуровна

СЕМАНТИКО-ГРАММАТИЧЕСКИЙ АНАЛИЗ ПОВТОРОВ
И ПАРНЫХ СЛОВОСОЧЕТАНИЙ В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ
ЯЗЫКЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 “Древние и современные языки Азии (туркология)”

Защита состоится 1-ого Февраля 2016г., в 15:00 часов, на заседании специализированного совета по лингвистике ВАК 019 действующего в Институте языка имени Гр. Ачаряна НАН РА, по адресу: 0015 г. Ереван, ул. Г. Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена семантико-грамматическому, фонетическому, словообразующему, формообразующему, синтаксическому анализу повторов и парных словосочетаний в современном турецком языке. Методологическую основу исследования составляют методы анализа сравнительного языкознания. Мы проводим типологический анализ повторов и парных словосочетаний в турецком языке при помощи *сопоставительного метода*.

Диссертация состоит из введения, пяти глав с соответствующими параграфами, заключения и списка использованной литературы. Во введении представляются основные цели и задачи исследования, методологическая основа, обосновываются актуальность, значимость, научная новизна и основная цель диссертации. Даётся подробный анализ научной литературы по истории вопроса.

В первой главе, «*Общая характеристика повторов и парных словосочетаний в современном турецком языке*», описываются анализируемые феномены на стадиях развития турецкого языка. Повторы и парные словосочетания все еще играют большую роль в формировании словарного корпуса турецкого языка. Редупликаты в турецком языке, в первую очередь, указывают на *усиление смысла, значение множественности, а также длительности, связности и одновременности действия*. При помощи дублирования образуются существительные, прилагательные, наречия, становится возможным выразить степени сравнения прилагательных. Редупликаты широко распространены как в литературной, так и в разговорной речи, сообщая ей дополнительную выразительность и эмоциональность.

Во второй главе «*Роль фонетических трансформаций в процессе создания редупликатов и парных словосочетаний*» мы выделили полный, трансформированный, усеченный или частичный способы формирования редупликатов. Трансформированные редупликаты в современном турецком языке образуются почти из всех частей речи, включая подражательные слова и междометия. Редупликаты, образованные именами собственными, имеют уничижительную окраску. Словарные единицы, созданные методом частичной

редупликации, подразделяются на три группы в соответствии с количеством пропущенных фонем: двуфонемные, трехфонемные и четырехфонемные. В процессе создания редупликатов предпочтение всегда отдается формам с одинаковым количеством слогов.

В третьей главе, озаглавленной «*Номинативные повторы и парные словосочетания в современном турецком языке*», мы выделяем последовательные, конъюнктивные и определительные формы. Номинативные парные словосочетания бывают коррелятивными (*eşsesli*), синонимическими (*eşanlamlı*) и антонимическими (*zit anlamlı*). Кроме вышеназванных, в турецком языке встречаются также единства, образованные заимствованными словами. В современном турецком языке редупликатные сложные слова образуются повторением одного и того же слова. Иногда в подобных единствах используются служебные слова. Тогда они связываются в обход существующих грамматических правил. Можно выделить также сочетания, один или оба компонента которых не являются значимой частью речи и самостоятельно в языке не используются. На первый взгляд подобные компоненты лишены лексического значения, но сравнительно-исторический метод позволяет выявить и восстановить их. Конструкции, составленные антонимами, выражают стилистическую и эмоциональную окрашенность, используются во фразеологических оборотах, пословицах, поговорках, газетных заголовках.

Множественное число в турецком языке имеет также морфологический, синтаксический и лексический способы выражения. Лексическим способом выражения являются парные словосочетания и редупликаты. В турецком языке они рассматриваются с точки зрения морфологии и словообразования. Идентичными редупликатами в современном турецком языке считаются формы, образованные различными аффиксами, частицами и служебными словами.

В четвертой главе «*Глагольные парные словосочетания и глагольные повторные формы в современном турецком языке*» мы попытались проанализировать сложные глагольные формы турецкого языка, закономерности процесса создания, их вариативность. Турецкий язык предлагает большое количество сложных глагольных единств. Глагольные конструкции образуются с помощью почти всех форм. Каждый из компонентов может выступать независимо, а также быть связанным союзами, служебными словами, различными аффиксами, вводными словами. Глагольные редупликаты не являются особыми грамматическими формами: они используются лишь в лингвостилистических целях, чтобы придать речи эмоциональную насыщенность.

В пятой главе «*Повторы и парные словосочетания в синтаксических конструкциях*» мы описываем изучаемый феномен в различных синтаксических проявлениях. В предложении повторы и парные словосочетания исполняют различные роли в зависимости от морфологической и смысловой принадлежности компонентов. В словосочетаниях со сложными несогласованными определениями (изофтигная форма), повтор может служить как определением, так и определяемым. В современном турецком языке повтор играет роль семантического разграничения. Редупликаты, образованные существительными, прилагательными и другими номинальными частями речи, изначально являются

одной грамматико-семантической единицей и в предложении выступают как один член, что связано с особенностями разграничения определений и обстоятельств.

Подобное единство разных частей речи - существительное-прилагательное-наречие, сложившееся исторически, постепенно начинает дифференцироваться в соответствии с синтаксической ролью каждого компонента.

В заключении диссертации обобщены и изложены основные выводы работы.

DIANA ARTHUR HAYRAPETYAN
SEMANTİC AND GRAMMATİCAL ANALYSİS OF
JUXTAPOSITIONS AND DUPLICATE FORMS IN MODERN TURKİSH

Dissertation for the degree of candidate of philological sciences,
speciality 10.02.06, The Ancient and Modern Languages of Asia (Turkic
languages).

The defence will be held on the 1st of February 2016, at 15:00 at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commision) in the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address: 0015 Yerevan, Grigor Lusavorich str. 15)

SUMMARY

The dissertation is devoted to the analyses of juxtapositions and duplicate forms in Modern Turkish from semantic and grammatical point of view. Our research studies phonetic, formative, morphological, syntactic and semantic features of juxtapositions and duplicate forms in Modern Turkish, in comparison with their Armenian equivalents.

The research's methodology is based on the analytical method used in comparative linguistics. We used the *comparative method* to analyse the typological features of Turkish juxtapositions and duplicate forms.

The dissertation consists of introduction, five chapters with their corresponding subchapters, conclusion and bibliography. The Introduction of our research describes the main objectives, the methodological basis of the study; it also justifies the novelty, importance and aim of the theme. A brief review of literature is also provided.

The first chapter, "The Common Characteristics of Modern Turkish Duplicate Forms and Juxtapositions", describes the pragmatic significance of juxtapositions and duplicates as an important means of enriching Turkish vocabulary in all stages of development of the Turkish language. In Modern Turkish the formation of new lexical units by means of juxtapositions and duplicate forms continue to be as one of the most effective ways of word-formation, which can analyzed from the point of view of word-formation and morphology. In Turkish the duplicate forms mainly reflect the intensification of meaning, idea of plurality, sustainability and the meaning of implementation of joint action. The linguistic phenomenon of *complexity* is mainly active in the field of word formation in Modern Turkish, but it is also observed in the context of morphology. The complexity in the language makes nouns, adjectives, adverbs; it makes possible to express the degrees of comparison of the adjective, plurality. Due to the Turkish linguistic characteristics, many duplicate forms exist in the language. They are widely spread both in the literary language and colloquial speech for the expressiveness and emotional colouring.

The Second chapter "The Role of Phonetic Changes in the Formation Process of Duplicates and Juxtapositions" introduces the full, transformed, contracted or partial

duplicates. Transformed duplicates, derived from the full ones, differ from their initial forms by the qualitative features of the second component, which is the rhythmical word-echo of the first component. This type of dublication is peculiar to Turkish and has wide range of use. In Modern Turkish transformed duplicates are formed with nearly all parts of speech, including imitative words.

According to the number of contracted phonemes compounds formed through partial duplication fall into three groups; double-phonemes, triple-phonemes, four times-phonemes. Under the influence of stem-compounds syllabic identification process, preference is always given to the constructions, in which the number of the syllables is the same. For the same reason stress movements can occur. Phonetic peculiarities are typical for Turkish juxtapositions and duplicates, which have great role in components' word order.

In Chapter Three "*Nominal Juxtapositions and Duplicates of Modern Turkish*" three types of compounds are singled out; coherent, conjunctive, adherent. Nominal juxtapositions in Turkish can be *correlative* (*eşsesli*), *synonymic* (*eşanlamlı*), *antonymic* (*zit anlamlı*). Along with compounds formed with synonymous, antonymic or correlative compounds, in Turkish there are many units of form and content formed with loanwords. Juxtapositions formed with components related to objects, phenomena, quality express unity, collectivity and juxtapositions with synonymous components express intensification of meaning and enter morphological models as one word unit.

In Modern Turkish duplicate compounds are the juxtapositions which are formed with the repetition of the same word. Usually one-syllabic words are repeated, they are written separately like juxtapositional compounds and the components preserve their stress. Very often conjunctions and prepositions are used between duplicated component words. One or two of the components are syntactically linked by grammatically inclined means. Among difficulties another group is singled out, where one or even both components are not independent word units and are not used like that in the language. In some cases such components lack lexical meaning in Modern Turkish, but due to historical and comparative analyses of the word it becomes possible, conventionally, to recover the meaning of the word it obtained in the past. Compounds formed with synonymous juxtapositions are very common in Modern Turkish and in Turkic languages. Another group of juxtapositions is formed with two antonymic words with notional meaning. The components of antonym nominal juxtapositions express opposite meaning. Juxtapositions formed with antonymic components are used for stylistic and expressive aims, in lexical phrases, proverbs, sayings, phraseological units newspaper tytles. Alongside with grammatical means of expressing plurality, another type is common in word-formation which is called syntactic-morphological, syntactical and lexical. Likewise lexical comparisons are considered to be compounds; juxtapositions, duplicates. In Turkish compounds are viewed from the point of view of morphology and word-formation.

In Chapter Four "*Verbal Duplicates and Verbal Juxtapositional Compounds in Modern Turkish*" an attempt has been made to represent the verbal juxtapositional compounds of Modern Turkish, the peculiarities of their formation, models-Armenian equivalents. Juxtapositions formed with comparative verbs with their structural, semantic peculiarities are of special interest. There exist a great number of verbal juxtapositioanl models in Turkish. Verbal juxtapositions and duplicates are formed with

finite, non-finite and conjugated forms of the verb. Each of the components can perform as an independent unit or can be connected with the help of conjunctions, notional words, different affixes, inserted particles. Verbal duplicates are not specific grammatical forms, they are used stylistically for expressive and emotional coloring, so double, triple and even more repetitions of the verb are quite possible.

Chapter Five "*Juxtapositions and Duplicates in Syntactical Constructions*" represents syntactical expressions of juxtapositions and duplicates. In sentences juxtapositions usually perform different syntactical functions depending on their morphological peculiarities and their belonging to parts of speech. This is especially vividly seen in juxtapositions, which appear as one lexical independent unit in a sentence and perform this or that syntactical function. Usually juxtapositions formed with nominal parts of speech can perform the function of a subject, object, modifier and predicate.

In Modern Turkish duplication is also considered to be as a means of differentiating the parts of speech. Duplicates formed with nouns, adjectives and other parts of speech have syntactical reasons connected to modifier and attribute differentiation, which are initially presented as one lexical and grammatical form with non-differentiated semantic peculiarities and are included into one common group of objects and features.

Historically the similarity existing among nouns, adjectives and adverbs starts gradually to be differentiated according to their syntactical functions.

The results of the dissertation are summarized in the concluding statements.

